

«Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ

2009 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՎԵՐԼՈՒԾՎԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳՎԱԾՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵՐԵՎԱՆ 2010

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է հաշվի առնելով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի հունիսի 3-ի N259Ա որոշմամբ համաձայնեցված ներդրումային ծրագրի շրջանակներում 2009 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2010 թվականի փետրվարի 3-ի N°04-ՎԱ-08/419 գրությամբ ներկայացված հաշվետվությունը (հաշվի են առնվել նաև ընկերության 2009 թվականի հոկտեմբերի 20-ի N°04-ՎԱ-05/6371 գրությամբ 2009 թվականի ներդրումների ծավալում առաջարկվող փոփոխությունները) և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N°275-ՀՆ հրամանի համաձայն սույն թվականի սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում «ՀԷՑ» ՓԲԸ-ի 2009 թվականին իրականացված ներդրումների փաստացի ծավալների մոնիթորինգի արդյունքները:


«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2009 թվականի ներդրումային ծրագիրը

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2009 թվականի տարեկան ներդրումային ծրագիրը հանդիսանում է ընկերության 2009-2011 թվականների եռամյա ներդրումային ծրագրի բաղկացուցիչ մասը: Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված է տարբեր միջոցառումներ իրականացնել բաշխիչ ցանցերի վերակառուցման և վերազինման ուղղությամբ՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների, ինչպես նաև հուսալիության և անվտանգության աստիճանի բարձրացման նպատակով: Նախատեսված է ներդրումներ իրականացնել նաև բաշխիչ ցանցերի ընդլայնման, այլ անձանց պատկանող ցանցերի ձեռքբերման, բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման և ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով, համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, արտադրական և տնտեսական գործիքների ձեռքբերման ուղղություններով: Բացի վերը նշվածը, ներդրումներ են նախատեսվում «Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» վարկային ծրագրի շրջանակներում 110կվ ենթակայանների արդիականացման ուղղությամբ:

Ներդրումային ծրագրով նախատեսված էր 2009-2011 թվականների ընթացքում իրականացնել 65 547.1¹ մլն դրամի ներդրումներ, որից 33 470.9 մլն դրամը՝ 2009 թվականի ընթացքում:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է ընկերության 2009 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև՝ ըստ դրանց նպատակային առանձնահատկությունների:

Գրաֆիկ 1



Ինչպես երևում է գրաֆիկ 1-ից, ներդրումների հիմնական մասը՝ շուրջ 51 %-ը, նախատեսված է ուղղել 110 կՎ լարման 17 ենթակայանների արդիականացմանը: Այս ներդրումներն իրականացվում են «Էլեկտրահաղորդման և փաշխիչ համակարգեր» վարկային ծրագրի շրջանակներում՝ Ճապոնիայի Զարգացման և Համագործակցության բանկի վարկի միջոցներով: Միաժամանակ նշված ծրագրով նախատեսված ներդրումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ընկերությունը նախատեսում էր իր միջոցներով այդ ենթակայաններում իրականացնել որոշ լրացուցիչ աշխատանքներ, որոնք նույնպես ներառվել են ներդրումային ծրագրում:

¹ Սույն վերլուծական փեղեկանքում ներկայացված բոլոր գումարները չեն ներառում ավելացված արժեքի հարկը:

Ներդրումների մյուս խոշոր ուղղությունը՝ շուրջ 24%, նախատեսվում է սպասարկման որակի ցուցանիշների բարելավման նպատակով ուղղել մալուխային և օդային գծերի ու ենթակայանների վերակառուցմանը, վերազինմանը և նորերի կառուցմանը:

Անվտանգության տեխնիկայի ապահովման և մաշված սարքավորումների փոխարինման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 4 160.0 մլն դրամ՝ ընդհանուրի 12.4%-ը:

Հաշվառման համակարգի բարելավմանն ուղղված ներդրումները իրենց տեսակարար կշռով չորրորդն են: Այդ նպատակով պետք է փոխարինվեին կամ տեղակայվեին նոր հաշվիչներ և հաշվիչների արկղեր՝ էլեկտրաէներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով դրանց ներկայացվող պահանջների ապահովման նպատակով: Նախատեսվում էր նաև 0.4, 6(10) և 35 կՎ լարման ցանցերում հաշվառման համակարգի ավտոմատացման աշխատանքներ:

1470.0 մլն դրամ՝ ընդհանուրի 4.4%-ը նախատեսվում էր ներդնել բաշխիչ ցանցերի ընդլայնման և այլ անձանց պատկանող ցանցերի ձեռք բերման ուղղությամբ:

Ներդրումային ծրագրի մյուս ուղղություններով նախատեսված ներդրումները, որոնք կազմում են ընդհանուրի 3.5%-ը, պետք է իրականացվեին վարչական շենքերի վերակառուցման, մեքենա-մեխանիզմների, գրասենյակային գույքի, համակարգչային տեխնիկայի, Modus կարգավարական ծրագրի, ինչպես նաև շահագործման կազմակերպման համար այլ սարքավորումների և գործիքների ձեռքբերման ուղղությամբ: Այս ուղղություններով 2009 թվականի ընթացքում նախատեսվում էր իրականացնել 1 187.8 մլն դրամի ներդրումներ:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2009 թվականի ներդրումային գործունեության արդյունքները

Համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության, ընկերությունը 2009 թվականի ընթացքում կատարել է 22 955.16 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 11 921.67 մլն դրամի հիմնական միջոցներ: Մնացած 11033.49 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ: Նշենք, որ այս ծավալում 9322.22 մլն դրամի

անավարտ աշխատանքները վերաբերում են ճապոնական վարկի շրջանակներում 110 կՎ ենթակայանների վերակառուցման ուղղությամբ ներդրումներին:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի իրականացված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	Ներդրումների նպատակային ուղղությունները	Հանձնաժողովի հետ համաձայնեցված 2009 թվականի կանխատեսվող ծավալը		2009 թվականի ընթացքում փաստացի կատարված ներդրումների ծավալը		Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշը
		Մլն դրամ	%	Մլն դրամ	%	
1	2	3	4	5	6	7
1	Սպասարկման որակի ցուցանիշների բարելավում	7 942.8	23.7%	7 296.2	31.8%	91.9%
2	Բաշխիչ ցանցերի ընդլայնում	1 470.0	4.4%	1 798.7	7.8%	122.4%
3	110 կՎ ենթակայանների արդիականացում	17 200.0	51.4%	9 322.2	40.6%	54.2%
4	Հաշվառման համակարգի բարելավում	1 510.3	4.5%	1 073.9	4.7%	71.1%
5	Անվտանգության միջոցառումներ և մաշված սարքավորումների փոխարինում	4 160.0	12.4%	2 358.0	10.3%	56.7%
6	Գրասենյակային գույքի ձեռքբերում	150.0	0.4%	151.2	0.7%	100.8%
7	Մեքենաների և մեխանիզմների ձեռքբերում	134.6	0.4%	-	0.0%	0.0%
8	Համակարգչային տեխնիկայի և ծրագրերի ձեռքբերում	463.2	1.4%	306.6	1.3%	66.2%
9	Շենքերի և շինությունների վերակառուցում	350.0	1.0%	467.7	2.0%	133.6%
10	Այլ	90.0	0.3%	36.5	0.2%	40.6%
11	Ներդրումային ծրագրի շրջանակներից դուրս իրականացված ներդրումներ		-	144.3	0.6%	
	Ընդամենը	33 470.9	100%	22 955.2	100%	69%

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները.

Աղյուսակ 2

	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Իրականացված ներդրումների ծավալները
1	2	3
1	Նախորդ ժամանակահատվածում իրականացված ներդրումներից	1 350.5
2	Կողմնակի կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից	16 954.0
3	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից	1 313.8
4	Մեփական ուժերով կատարված աշխատանքներից	3 336.9
4.1	<i>աշխատավարձ և սոցիալական ապահովության ծախսեր</i>	<i>189.2</i>
4.2	<i>հումք և նյութեր</i>	<i>1 994.7</i>
4.3	<i>տեղակայման ենթակա սարքավորումներ</i>	<i>1 153.0</i>
5	ԸՆԴԱՄԵՆԸ	22 955.2

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, ընկերությունը 2009 թվականին ներդրումների իրականացման նպատակով ներգրավել է 22 955.2 մլն դրամ, որից 1350.5 մլն դրամը նախորդ ժամանակաշրջանում իրականացված ներդրումներն են: Ներդրումների 74%-ը, իրականացվել է այլ կազմակերպությունների միջոցով: Մեփական ուժերով կատարված ներդրումների ծավալը կազմել է ընդհանուրի մոտ 14%-ը: Ներդրումների 6%-ը բաժին է ընկնում տեղակայում չպահանջող սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ, իսկ մնացած 6%-ը նախորդ ժամանակաշրջանում իրականացված, սակայն 2009 թվականին շահագործման հանձնված աշխատանքներին:

Ստորև, առավել հանգամանալից ըստ ուղղությունների, ներկայացված են ընկերության կողմից 2009 թվականին իրականացված ներդրումների ծավալները հետազայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման տեսանկյունից:

Սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումները

Սպասարկման որակի բարելավման նպատակով ընկերության 2009 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր իրականացնել 7942.8 մլն դրամի ներդրումներ՝ բաշխիչ ցանցերի լարման տարբեր մակարդակներում օդային և մալուխային գծերի, ենթակայանների վերանորոգման, վերակառուցման և նորերի կառուցման նպատակով: Փաստացի իրականացվել է 7296.2 մլն դրամի ներդրումներ, որից շահագործման են հանձնվել 6358.1 մլն դրամի ներդրումները:

2008 թվականից սկսած, սպասարկման որակի ցուցանիշները սահմանվում են յուրաքանչյուր մարզի համար: Ներդրումային ծրագրով նախատեսվում էր առաջնահերթ ներդրումներ իրականացնել առավել վատ ցուցանիշներով մարզերում:

Ստորև ներկայացվում է 2009 թվականի ընթացքում սպառողների հոսանքազրկումների միջին հաճախության և տևողության ցուցանիշների համեմատությունը 2008 թվականի փաստացի և 2009 թվականի ծրագրային ցուցանիշների հետ:

Աղյուսակ 3

Հոսանքազրկումների միջին հաճախություն							
Սպասարկման տարածքը	Զափի միավոր	2008թ. փաստացի	2009թ. ծրագրային	2009թ. փաստացի	2009թ. փաստ. 2008թ. փաստ. նկատմամբ	2009թ. փաստ. 2009թ. ծրագր. նկատմամբ	Իրականացված ներդրումների ծավալը
Երևան	հոսանքա-զրկում/սպառող	6.01	5.76	5.94	1.2%	-3.2%	2,931.7
Արարատ	հոսանքա-զրկում/սպառող	4.17	4.12	4.43	-6.2%	-7.5%	240.2
Վայոց Ձոր	հոսանքա-զրկում/սպառող	4.99	4.75	4.33	13.2%	8.8%	20.4
Արագածոտն	հոսանքա-զրկում/սպառող	6.18	6.05	7.31	-18.3%	-20.8%	151.6
Արմավիր	հոսանքա-զրկում/սպառող	7.41	7.33	7.97	-7.6%	-8.7%	236.8
Կոտայք	հոսանքա-զրկում/սպառող	3.84	3.84	5.22	-35.9%	-35.9%	435.6
Գեղարքունիք	հոսանքա-զրկում/սպառող	5.19	5.19	5.48	-5.6%	-5.6%	403.5
Տավուշ	հոսանքա-զրկում/սպառող	9.74	9.15	8.03	17.6%	12.2%	105.5
Շիրակ	հոսանքա-զրկում/սպառող	5.88	5.75	4.97	15.5%	13.6%	374.4
Սյունիք	հոսանքա-զրկում/սպառող	1.91	1.91	1.58	17.3%	17.3%	248.8
Լոռի	հոսանքա-զրկում/սպառող	4.82	4.77	5.01	-3.9%	-5.1%	343.4
Հոսանքազրկումների միջին տևողություն							
Երևան	րոպե/սպառող	549.11	525.50	531.60	3.2%	-1.2%	2 931.7

Արարատ	րոպե/ սպառող	725.06	715.50	742.48	-2.4%	-3.8%	240.2
Վայոց Ձոր	րոպե/ սպառող	868.74	814.58	895.17	-3.0%	-9.9%	20.4
Արագածոտն	րոպե/ սպառող	1 337.72	1 298.75	1 011.74	24.4%	22.1%	151.6
Արմավիր	րոպե/ սպառող	1 556.65	1 525.25	1 193.75	23.3%	21.7%	236.8
Կոտայք	րոպե/ սպառող	488.66	488.66	897.40	-83.6%	-83.6%	435.6
Գեղարքունիք	րոպե/ սպառող	798.10	798.10	1 070.23	-34.1%	-34.1%	403.5
Տավուշ	րոպե/ սպառող	1 345.77	1 325.50	1 175.48	12.7%	11.3%	105.5
Շիրակ	րոպե/ սպառող	771.39	760.50	610.13	20.9%	19.8%	374.4
Սյունիք	րոպե/ սպառող	540.52	540.52	454.00	16.0%	16.0%	248.8
Լոռի	րոպե/ սպառող	1 000.14	920.43	769.97	23.0%	16.3%	343.4

Ստորև ներկայացվում է 2009 թվականի ընթացքում սպառողների լարման շեղման միջին հաճախության և տևողության ցուցանիշների համեմատությունը 2008 թվականի փաստացի և 2009 թվականի ծրագրային ցուցանիշների հետ:

Աղյուսակ 4

Էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին հաճախություն							
Սպասարկման տարածքը	Չափի միավոր	2008թ. փաստացի	2009թ. ծրագրային	2009թ. փաստացի	2009թ.փաստ. 2008թ.փաստ. նկատմամբ	2009թ.փաստ. 2009թ.ծրագր. նկատմամբ	Իրականացված ներդրումների ծավալը
Երևան	լարման շեղում/բաժանորդ	8.37	8.07	10.20	-21.9%	-26.4%	224.9
Արարատ	լարման շեղում/բաժանորդ	27.69	25.50	26.26	5.2%	-3.0%	19.5
Վայոց Ձոր	լարման շեղում/բաժանորդ	8.39	8.17	15.16	-80.7%	-85.6%	39.2
Արագածոտն	լարման շեղում/բաժանորդ	22.28	20.12	27.24	-22.3%	-35.4%	23.1
Արմավիր	լարման շեղում/բաժանորդ	15.76	14.80	19.72	-25.1%	-33.2%	51.5
Կոտայք	լարման շեղում/բաժանորդ	11.23	10.40	11.12	1.0%	-6.9%	62.6
Գեղարքունիք	լարման շեղում/բաժանորդ	17.06	15.42	19.02	-11.5%	-23.3%	34.3
Տավուշ	լարման շեղում/բաժանորդ	23.80	21.50	23.95	-0.6%	-11.4%	61.8
Շիրակ	լարման շեղում/բաժանորդ	16.84	16.49	17.53	-4.1%	-6.3%	150.8
Սյունիք	լարման շեղում/բաժանորդ	8.25	7.83	8.54	-3.5%	-9.1%	49.7
Լոռի	լարման շեղում/բաժանորդ	23.18	21.18	18.00	22.3%	15.0%	43.7
Էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին տևողություն							
Երևան	ժամ/բաժանորդ	1 474.32	1 470.25	1 789.59	-21.4%	-21.7%	224.9
Արարատ	ժամ/բաժանորդ	4 927.86	4 510.00	4 641.10	5.8%	-2.9%	19.5

Վայոց Ձոր	ժամ/բաժանորդ	1 525.69	1 495.00	2 765.03	-81.2%	-85.0%	39.2
Արագածոտն	ժամ/բաժանորդ	3 964.22	3 606.88	4 868.83	-22.8%	-35.0%	23.1
Արմավիր	ժամ/բաժանորդ	2 801.09	2 650.00	3 519.15	-25.6%	-32.8%	51.5
Կոտայք	ժամ/բաժանորդ	1 929.83	1 801.03	1 907.93	1.1%	-5.9%	62.6
Գեղարքունիք	ժամ/բաժանորդ	3 139.02	2 867.31	3 481.83	-10.9%	-21.4%	34.3
Տավուշ	ժամ/բաժանորդ	4 174.69	3 820.00	4 187.37	-0.3%	-9.6%	61.8
Շիրակ	ժամ/բաժանորդ	3 034.34	2 958.00	3 163.43	-4.3%	-6.9%	150.8
Սյունիք	ժամ/բաժանորդ	1 483.01	1 405.17	1 532.10	-3.3%	-9.0%	49.7
Լոռի	ժամ/բաժանորդ	4 149.79	3 825.00	3 182.98	23.3%	16.8%	43.7

Ինչպես երևում է աղյուսակներից, իրականացված ներդրումները և ստացված ցուցանիշները բավականին իրարամերժ են: Այսպես, մարզերում հոսանքազրկումների քանակի և տևողության կրճատման ուղղությամբ ամենամեծ ծավալով ներդրումներն իրականացվել են Կոտայքի մարզում՝ 435.6 մլն դրամ, սակայն հոսանքազրկումների հաճախությունը ավելացել է մոտ 36%-ով, իսկ տևողությունը մոտ 84%-ով: Նշենք նաև, որ 2008 թվականի ընթացքում ևս Կոտայքի մարզում գրանցվել էր սպասարկման որակի ցուցանիշների զգալի վատթարացում: Նման իրավիճակ է գրանցվել նաև Արագածոտնի մարզում՝ մոտ 150 մլն դրամ ներդրումների պարագայում բաժանորդների հոսանքազրկումների հաճախության ցուցանիշը վատթարացել է մոտ 18%-ով: Ուստի կարելի է եզրակացնել, որ սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունները ներկայացվում են զգալի թերություններով:

Ներկայացված տեղեկատվության լիարժեք հավաստի լինելու հանգամանքի վերաբերյալ կասկածի տեղիք է տալիս նաև ստորև ներկայացված ՀՀ մարզերում 2009 թվականի ընթացքում հոսանքազրկումներ չունեցած բնակավայրերի թիվը:

Աղյուսակ 5

		Բնակավայրերի քանակ	Բնակավայրերի քանակ առանց ընդհատումների	%
1	Արագածոտնի մարզ	119	52	44%
2	Արարատի մարզ	98	26	27%

3	Արմավիրի մարզ	98	22	22%
4	Գեղարքունիքի մարզ	97	21	22%
5	Լոռու մարզ	124	53	43%
6	Կոտայքի մարզ	69	10	14%
7	Շիրակի մարզ	130	22	17%
8	Սյունիքի մարզ	134	68	51%
9	Վայոց ձորի մարզ	54	18	33%
10	Տավուշի մարզ	65	2	3%
11	Ընդամենը	989	294	30%

Ինչպես երևում է աղյուսակից, ՀՀ մարզերի 989 բնակավայրերից 294-ում 2009 թվականի ընթացքում ընդհանրապես հոսանքագրվում չի գրանցվել: Նշվածը ևս թույլ է տալիս եզրակացնել, որ ոչ բոլոր հոսանքագրվումներն են գրանցվում հաշվետվություններում: Նշենք նաև, որ 2008 թվականին առանց ընդհատումների բնակավայրերի քանակը կազմել էր 452` 46%:

Կասկածի տեղիք են տալիս նաև լարման շեղումների հաճախության և տևողության հաշվարկները. չնայած այն հանգամանքին, որ 2009 թվականի ընթացքում այս ուղղությամբ իրականացվել է մոտ 760 մլն դրամի ներդրումներ գրեթե բոլոր մարզերում այս ցուցանիշները ոչ միայն չեն հասել ծրագրայինին այլ վատթարացել են փաստացիի նկատմամբ:

Ամփոփելով` հարկ է նշել, որ ընկերությունը բավարար ջանքեր չի գործադրում սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ճշգրիտ տեղեկատվություն ներկայացնելու ուղղությամբ:

Բաշխիչ ցանցերի ընդլայնման ուղղությամբ կատարված ներդրումները

Բաշխիչ ցանցերի ընդլայնման ուղղությամբ ներդրումային ծրագրով նախատեսվում էր 1470.0 մլն դրամի ներդրումներ իրականացնել Երևան քաղաքում աճող սպառման ծավալները բավարարելու համար նոր սպառողների միացման, Գրիգոր

Լուսավորիչ 5 հասցեում ենթակայանի կառուցման և Դուրյան թաղամասի հարակից տարածքի էլեկտրամատակարարման աշխատանքների ավարտման (աշխատանքները սկսվել էին 2008 թվականին) և այլ անձանց պատկանող ցանցերի ձեռք բերման ուղղությամբ: 2009 թվականի ընթացքում փաստացի ներդրվել է 1798.7 մլն դրամ, որից շահագործման է հանձնվել 1273.3 մլն դրամը: Այս ծավալում 1229.9 մլն դրամը նոր բաժանորդների ցանցին միացման ուղղությամբ ներդրումներն են: Հարկ ենք համարում նշել, որ նոր բաժանորդների միացման նպատակով գանձվել են 437.7 մլն դրամի միացման վճարներ, որոնք ենթակա են նվազեցման ներդրումների ծավալից:

Հատուկ ծրագրերի իրականացում

«Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» վարկային ծրագրի շրջանակներում, Ճապոնիայի Զարգացման և Համագործակցության բանկի վարկի միջոցներով 110 կՎ լարման 17 ենթակայանների արդիականացման աշխատանքների և դրանց իրականացման համար ընկերության միջոցներով իրականացվող անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների ուղղությամբ ներդրվել է 9322.2 մլն դրամ, որից 2009 թվականում շահագործման է հանձնվել ընդամենը 284.2 մլն դրամի աշխատանքները:

Հաշվառման համակարգի վերազինման ուղղությամբ կատարված ներդրումները

Ներդրումային ծրագրի հաջորդ՝ հաշվառման համակարգի վերազինման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 1510.3 մլն դրամի ներդրումներ: Այդ նպատակով պետք է փոխարինվեին հետագա շահագործման համար ոչ պիտանի հաշվիչները, կատարելագործվեին առևտրային հաշվառման համակարգը և տեղակայվեին հաշվիչների նոր արկղեր՝ հաշվառման սարքերի մեխանիկական վնասվածքները և կողմնակի անձանց միջամտությունը դրանց միացման սխեմային կամ աշխատանքին բացառելու, ինչպես նաև սպառողների և ընկերության ներկայացուցիչների համար հաշվիչի ցուցմունքի տեսանելիությունը՝ դրանց շահագործման և պահպանման անվտանգությունը ապահովելու նպատակով:

Համաձայն ներկայացված հաշվետվության, այս ուղղությամբ ընկերությունն իրականացրել է 1070.0 մլն դրամի ներդրումներ, այդ թվում՝

- հաշվիչների փոխարինման նպատակով՝ 739.0 մլն դրամ, որից 565.0 մլն դրամը սպառողների համար միաֆազ էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչների տեղադրման նպատակով,
- հաշվիչների արկղերի տեղադրման նպատակով՝ 187.0 մլն դրամ,
- 0.4, 6(10) և 35 կՎ լարման ցանցերում էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի համալրման նպատակով՝ 146.2 մլն դրամ, որից ավարտվել են 143.9 մլն դրամի աշխատանքները:

Անվտանգության տեխնիկայի ապահովման և մաշված սարքավորումների փոխարինման ուղղությամբ կատարված ներդրումներ

Ներդրումային ծրագրի մյուս ուղղությունը անվտանգության տեխնիկայի ապահովման և մաշված սարքավորումների փոխարինման ուղղությունն է: Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 1738.7 մլն դրամ: Փաստացի ներդրվել է 2358.0 մլն դրամ, որի արդյունքում 2088.3 մլն դրամի աշխատանքներ հանձնվել են շահագործման: Արդյունքում լարման տարբեր մակարդակներում փոխարինվել են ուժային տրանսֆորմատորներ և շահագործման համար ոչ պիտանի այլ սարքավորումներ, վերակառուցվել են օդային գծեր:

Այլ ուղղություններով կատարված ներդրումները

Ներդրումային ծրագրի մնացած ուղղություններով նախատեսվում էր.

- վարչական շենքերի վերակառուցման նպատակով ներդնել 350.0 մլն դրամ: Փաստացի ներդրվել է 467.7 մլն դրամ և շահագործման են հանձնվել 349.1 մլն դրամի աշխատանքներ,
- համակարգչային տեխնիկայի և արքեսուարների ձեռքբերում՝ 354.2 մլն դրամ արժեքով: Փաստացի ձեռք է բերվել 268.2 մլն դրամի համակարգչային տեխնիկա և արքեսուարներ: Այս ուղղությամբ ներդրումները կատարվել են 66 %-ով,

- գրասենյակային գույքի և կահույքի ձեռքբերման նպատակով փաստացի իրականացված ներդրումները կազմում են 147.6 մլն դրամ կամ նախատեսվածի 98.4%-ը,
- ներդրումային ծրագրով 2009 թվականին նախատեսվում էր 109 մլն դրամի Modus դիսպետչերական ծրագրի ձեռքբերում: Այս ուղղությամբ փաստացի ներդրվել է 38.4 մլն դրամ,
- մեքենա-մեխանիզմների ձեռքբերման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 134.6 մլն դրամ: Այս ուղղությամբ 2009 թվականի ընթացքում ներդրումներ չեն իրականացվել,
- այլ սարքավորումների ձեռք բերման ուղղությամբ ներդրվել է 36.5 մլն դրամ՝ նախատեսվածի 41%-ը:

Սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Ինչպես արդեն նշվեց, 2009 թվականի ընթացքում ընկերության կողմից իրականացվել է 22 955.2 մլն դրամի ներդրումներ: Ավարտվել են 11 921.7 մլն դրամ ընդհանուր արժեքով աշխատանքներ, այդ թվում 1350.5 մլն դրամի նախորդ ժամանակաշրջանում իրականացված ներդրումներ, իսկ 11 033.5 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ:

Իրականացված ներդրումների ծավալում առկա են աշխատանքներ, որոնք չեն ընդունվել հանձնաժողովի աշխատակազմի կողմից և ենթակա են նվազեցման ընկերության սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ մասնավորապես.

1. տարբեր լարման ցանցերում տեղակայված սարքավորումների (ՕՊՆ, ԿՍՕ, ՅԱՌՎ, ՎՌՌԻ, ՇՌՍ) արժեքներից ռուսական շուկայում առկա առաջարկների հետ համադրության արդյունքում նվազեցվել է 223.1 մլն դրամ,
2. 2009 թվականի ընթացքում ձեռք բերված 176.9 մլն դրամի հաշվիչների արկղերի արժեքից նվազեցվել է 74.4 մլն դրամ՝ հաշվի առնելով 2009-2011թթ. ներդրումային ծրագրում այդ արկղերի ձեռքբերման համար նախատեսված գները,

3. սպառողների հաղորդալարերի փոխարինման ուղղությամբ իրականացված 43 մլն դրամի ներդրումները, քանի որ այդ աշխատանքների արդյունավետությունը լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի,
4. 1624 անվանում մինչև 25000 դրամ արժեքով աշխատանքները ընդհանուր 24.7 մլն դրամ ծավալով, քանի որ անհասկանալի է այդ աշխատանքների որպես ներդրում դիտարկելու հանգամանքը,
5. արտաքին լուսավորության աշխատանքները՝ 2.84 մլն դրամ ընդհանուր ծավալով, քանի որ դրանք չեն բխում ընկերության լիցենզավորված գործունեությունից,
6. Նախագծման աշխատանքների ուղղությամբ իրականացված ներդրումներից նվազեցումներ.
 - հաշվետվությունում առկա են 134.7 մլն դրամի նախագծման ծախսեր, որոնց շրջանակներում իրականացված աշխատանքները արտացոլված չեն հաշվետվությունում: Այդ ծախսերը ենթակա են նվազեցման ներդրումների ծավալից, քանի որ դեռևս չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը,
 - ընկերության կողմից պատվիրված նախագծման աշխատանքների արժեքները կազմում են նախահաշվային արժեքների մոտ 13%-ը, ինչը զգալիորեն գերազանցում է այլ կարգավորվող անձանց կողմից իրականացվող նախագծման արժեքները (կազմում են նախահաշվային արժեքների շուրջ 7%-ը): Նշվածը հաշվի առնելով աշխատակազմի կողմից ընդունվել է այդ ուղղությամբ իրականացված ներդրումների 7/13-րդը մեկ երրորդը (269.2 մլն դրամ նվազեցվել է ներդրումների ծավալից),
7. ներդրումային ծրագրով չնախատեսված և չհիմնավորված ներդրումները՝ 181.73 մլն դրամ:

Այսպիսով, սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալի որոշման ժամանակ ներդրումների ընդհանուր ծավալից ենթակա է նվազեցման 668.49 մլն դրամ:

Բացի վերը նշվածը որոշ կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքներից նվազեցվել են

1. նախահաշվային տոկոսները (այլ նյութեր, ձմեռային թանկացումներ և այլն), որոնք փաստացի կատարված աշխատանքներում չպետք է հաշվարկվեն,
2. քաղաքաշինական փաստաթղթերում և այլ կարգավորվող անձանց կողմից ներկայացվող աշխատանքներում ընդունվածից բարձր շահույթի և վերադիր ծախսերի նորմաները,
3. աշխատանքներ, որոնք բնույթով հանդիսանում են սակագնի ծախսային հոդվածներ,
4. կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքներում առկա, շուկայականից բարձր գներով ձեռքբերված, սարքավորումների արժեքների տարբերությունները:

Ստորև ներկայացվում է փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալները:

Աղյուսակ 6

1	2009 թվականի ընթացքում իրականացված ներդրումներ	22 955.2
2	Ավարտված ներդրումներ	11 921.7
3	Իրականացված ներդրումներից նվազեցման ենթակա ներդրումներ	1 964.2
3.1	Հանձնաժողովի աշխատակազմի կողմից չընդունված ներդրումների ծավալը, այդ թվում՝	1 526.5
3.1.1	Սարքավորումների արժեքներից նվազեցումներ (կապված ընկերության կողմից դրանց ձեռք բերման և շուկայական գների տարբերության հետ), այդ թվում՝	297.5
ա.	Սարքավորումների (ՕՊՆ, ԿՍՕ, ՅԱՌՎ, ՎՌՈՒ, ՇՌՍ) արժեքներից նվազեցումներ	223.1
բ.	Հաշվիչների արկղերի արժեքից նվազեցումներ	74.4
3.1.2	Սպառողների հաղորդալարերի փոխարինման ուղղությամբ ներդրումներ	43.0
	Կապալառու ընկերությունների կողմից իրականացված աշխատանքների արժեքից նվազեցումներ	709.1
	«Էլեկտրասերվիս» ՍՊԸ-ի իրականացրած աշխատանքներից նվազեցումներ	270.0

	«Էկթրաք» ՍՊԸ-ի իրականացրած աշխատանքներից նվազեցումներ	295.1
	Այլ կապալառուների կողմից իրականացված աշխատանքներից նվազեցումներ	144.1
3.1.3	Նախագծման աշխատանքներից նվազեցումներ, այդ թվում՝	403.9
ա.	Նախագծման աշխատանքներից նվազեցումներ	269.2
բ.	Չավարտված աշխատանքների նախագծման աշխատանքների արժեքները	134.7
3.1.4	Այլ պատճառներով նվազեցումներ, այդ թվում	73.0
ա.	Ներդրումային ծրագրով չհամաձայնեցված ներդրումներ	45.4
բ.	Մինչև 25 հազ դրամ արժողությամբ ներդրումներ	24.7
գ.	Արտաքին լուսավորության աշխատանքներ	2.8
3.2	Նոր բաժանորդների միացման ուղղությամբ կատարված միացման վճարներ	437.7
4	2009 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ծավալը	9 957.5
	Հանձնաժողովի աշխատակազմի կողմից չընդունված ներդրումների ծավալը 2010 թվականի մարժայի սահմանման ժամանակ	1 091.6
	2011 թվականի մարժայի սահմանման ժամանակ 2009 թվականի ներդրումներից նվազեցման ենթակա ծավալը	872.6